# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2021 թ. N 1-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. Ջերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2021 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 77-Ա և N 78-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 81-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի 1-ին նրբանցքի N 7 հասցեում գտնվող հողամասը Զ. Իխտիարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի 1-ին նրբանցքի N 11 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակելու համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.8. Ջերմուկի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության շենքի 2-րդ հարկի ոչ բնակելի գրասենյակային տարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.9. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.10. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 59-Ա և 2017 թվականի մայիսի 23-ի N 52-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.11. «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ–ը անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.12. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

*զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կաղենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2021 թ. N 2-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6……. դեմ-……0…… ձեռնպահ- ……0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2021 թ. N 3-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի բյուջեի վարչական մասի 2021 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 29669144.8 (քսանինը միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար հարյուր քառասունչորս) դրամ 80 լումա գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա՝ պետական աջակցություն ՏԻՄ ծրագրի շրջանակներում 2013-2016թթ. համար ավել հատկացված գումարների հետ վերադարձմանը, էներգետիկ, կապի, կոմունալ, մասնագիտական և հարկային պարտավորությունների մարմանը, ապրանքանյութական արժեքների, պաշարների ձեռք բերմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 44615523.1 (քառասունչորս միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր քսաներեք) դրամ 10 լումա գումարն ուղղել կապիտալ ծախսերի /սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում/ ֆինանսավորմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2021 թ. N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Գերմանայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև համաձայնեցված «18 բազմաբնակավայր համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակում» ծրագրի շրջանակներում մշակված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույց»-ով՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-…6……… դեմ-…0……… ձեռնպահ-…0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2021 թ. N 5-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 77-Ա ԵՎ N 78-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 77-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշմամբ հաստատված հավելված 2-ում

ա/ «Հայեցողական պաշտոններ» մասից 4-րդ տողը հանել, 5-րդ տողի «Ընդամենը» ենթատողի «8» թիվը փոխարինել «7» թվով, «1 125 800» թիվը փոխարինել «887 600» թվով, «2 278 000» թիվը փոխարինել «2 039 800» թվով,

բ/ «Ընդհանուրը» տողի «45,5» թիվը փոխարինել «44,5» թվով, «5 978 273» թիվը փոխարինել «5 740 073» թվով, «9 370 163» թիվը փոխարինել «9 131 963» թվով:

2. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 78-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | Բաբայան | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2021 թ. N 6-Ն

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 81-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 81-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման 1-ին կետում «*633318.6*» թիվը փոխարինել «*673903.260*» թվով
2) որոշման 1-ին կետի 1.1 ենթակետում «583318.6» թիվը փոխարինել «*612987,736.9*» թվով
3) որոշման 1-ին կետի 1.2 ենթակետում «50000.0» թիվը փոխարինել «*60915,523.1*» թվով,
4) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 2-ի 2000 տողի 6-րդ սյունակում «617018,6» թիվը փոխարինել «657603,3» թվով, 7-րդ սյունակում «583318,6» թիվը փոխարինել «612987,7» թվով, 8-րդ սյունակում «33700,0» թիվը փոխարինել «44615,5» թվով, 2100 տողի 6-րդ սյունակում «164329,1» թիվը փոխարինել «178398,3» թվով, «148029,1» թիվը փոխարինել «162098,3» թվով, 2110 տողի 7-րդ սյունակում «135559,4» թիվը փոխարինել «149628,6» թվով, 2111 տողի «151859,4» թվով փոխարինել «165928,6» թվով, 2600-րդ տողի 6-րդ սյունակում «67881,2» թիվը փոխարինել «78796,7» թվով, 8-րդ սյունակում «33700,0» թիվը փոխարինեն «44615,5» թվով, 2640 և 2641 տողերի 6-րդ սյունակներում «57633,5» թիվը փոխարինել «68549,0» թվով, 8-րդ սյունակներում «33700,0» թիվը փոխարինել «44615,5» թվով, 3100, 3110 և 3112 տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում «52916,2» թիվը փոխարինել «68516,3» թվով:

5) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 3-ի 4000 տողի 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում 617018,6», «583318,6», «33700,0» թվերը համապատասխանաբար փոխարինել «657603,3», «612987,7», «44615,5» թվերով, 4050 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «583318,6» թիվը փոխարինել «612987,7» թվով, 4200 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «58429,1» թիվը փոխարինել «66049,1» թվով, 4210 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «30989,8» թիվը փոխարինել «35109,8» թվով, 4212 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «26220,2» թիվը փոխարինել «30220,2» թվով, 4214 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2685,1» թիվը փոխարինել «2805,1» թվով, 4240 և 4241 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «2303,6» թիվը փոխարինել «5803,6» թվով, 4500 տողի 4-րդ և 5-րդ

սյունակներում «225192,9» թիվը փոխարինել «231642,1» թվով, 4530 և 4531 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «221521,5» թիվը փոխարինել «227970,7» թվով, 4700 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «84746,2» թիվը փոխարինել «100346,3» թվով, 4770 և 4771 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «52916,2» թիվը փոխարինել «68516,3» թվով, 5000 և 5100 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «50000,0» թիվը փոխարինել «60915,5» թվով, 5110 և 5113 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «40762,0» թիվը փոխարինել «51677,5» թվով:

6) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 4-ի 800 տողի 3–րդ սյունակում «-33700,0» թիվը փոխարինել «44615,5» թվով, 4-րդ սյունակում «0,0» թիվը փոխարինել «29669,1» թվով, 5-րդ սյունակում «-33700,0» թիվը փոխարինել «74284,7» թվով:

7) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կարլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ..........6 դեմ-.......0 ձեռնպահ-.......0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2021 թ. N 7-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասերը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին» N 51-Ա որոշման 1-ին կետում «30 000» թիվը փոխարինել «10 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարագդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2021 թ. N 8-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ Զ. ԻԽՏԻԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 71-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով չափագրական աշխատանքների արդյունքում բացահայտված անճշտությունները՝ հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տալ համաձայնություն Ջերմուկ քաղաքի բնակիչ Զարզանդ Խաչիկի Իխտիարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի փետրվարի 13-ի N 13022018-10-0015 վկայական) Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի 1-ին նրբանցքի N 11 հասցում գտնվող բնակավայրերի նշանակության 1012,3 քմ մակերեսով հողամասի փոխանակմանը Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի հուլիսի 21-ի N 21072020-10-0006 վկայական) Սայաթ Նովայի փողոցի 1-ին նրբանցքի N 7 հասցեում գտնվող 1012,3 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | բացակա | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2021 թ. N 9-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ 2-ՐԴ ՀԱՐԿԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության շենքի 2-րդ հարկի ոչ բնակելի գրասենյակային տարածքը՝ 38,6 քմ ընդհանուր մակերեսով, վարձակալության իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության ծառայության Ջերմուկի տարածքային բաժնին՝ ամսական վարձավճարի չափ սահմանելով 40 000 (քառասուն հազար) դրամ, ժամկետը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված տարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագիր կնքելու, դրանում փոփոխություն կատարելու և լուծելու մասին որոշումներն ընդունում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | Բաբայան | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կամլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | Բաբայան | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-…………6…… դեմ-…………0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2021 թ. N 10-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «փ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության՝ սույն որոշման հավելվածում ներկայացված հողամասերը 2021 թվականի ընթացքում աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- …………6 դեմ-…………0 ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2021 թ. N 11-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 59-Ա ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» N 59-Ա որոշման 1-ին կետում «Հովհաննիսյան Նարեկ» բառերը փոխարինել «Գևորգյան Արտավազդ» բառերով:

2. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» N 52-Ա որոշման 1-ին կետի «դ» և «զ» ենթակետերում «Հովհաննիսյան Նարեկ» բառերը փոխարինել համապատասխանաբար «Բաբաջանյան Սանասար» և «Համբարձումյան Մխիթար» բառերով:

3. սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ-……6……… դեմ-……0……… ձեռնպահ-0……

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2021 թ. N 12-Ա

## «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ը ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ կազմակերպություն/:

2. Կազմակերպության կանոնադրությունում կատարել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխությունները և հաստատել կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......6....... դեմ-.......0....... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2021 թ. N 13-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 150000 դրամի չափով ֆինանսական օգնություններ տրամադրել համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մարինե Սարգսյանին և Գնդեվազ գյուղի բնակիչ Լևոն Հակոբյանին՝ 300000 դրամի չափով:

2. Արցախի Հանրապետությունում սկսված պատերազմով և Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված Ջերմուկ քաղաք տարբերայնորեն ուղարկված հումանիտար աջակցությունը (սնունդ, տնտեսական և հիգիենիկ ապրանքներ) պահեստավորելու նպատակով՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Ժորա Բաբայանի սեփական տարածքը որպես պահեստ օգտագործելու հետ կապված համայնքի բյուջեից փոխհատուցել նշված տարածքի՝ նախընթաց տարվա հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների էլեկտրաէներգիայի ծախսը՝ 310 000 (երեք հարյուր տաս հազար) դրամ գումարի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | բացակա | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6...... դեմ-..0........ ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 հունվարի 25

Ջերմուկ